


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻԻՆ

Պարկարիոյ համար	12 ֆր.
սարեկան վեցամսեայ	6 "
Արժաստիւնակի համար	15 "
սարեկան վեցամսեայ	8 "
Աւերիկայի համար	3 ֆր.
սարեկան վեցամսեայ	1.50 "

Ծանուցանել տալով որ Երևանի համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սարեկան կ. երեքին աւերիկայի սարեկան համար 20 0/0 զեղչ կը լայն:

Վառնայի համար մեկ ֆր. 100 սարեկան



Նախկին կը դրամ դրկի իսկապոքուրսեսն հասցիկն

Редакция на вѣстники "Иларжуръ" Варна

Redaction du journal "Char,oum" (Bulgarie) Yarna

Պարկարիոյ համար մեկ ֆր. 15 ՍԱՆԹԻՄ

Արժաստիւնակի համար մեկ ֆր. 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնի և ս չեմ ֆրութի

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՐԻՆ. ՔԱՂՈՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՒՇԱՐՈՒԹԻ ԵՒ ԵՄԱԹ ՕՐԵՐԸ

ՉԱՐՈՒԹԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԳՐՈՇԱԿԸ

ՔՐԻՍՏՈՍՓՈՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնական օրգանը դժբախտ պատահարի զոհ գնացած Քրիստոսափորի մասին ապրիլեան թուով հրկու գրատար յօդուածներ է հրատարակել, որոնցից մենք քաջութեամբ պաշնակցութեան հիմնադիրներէրից այդ մէկի յեղափոխական անձնաւորութիւնը բնորոշող խտացնող կտորները

«Նա Դաշնակցութեան անձնաւորումն էր. նրա մէջ, կարելի է ասել, կենտրոնանում էր մեր կազմակերպութեան ամբողջ պատմութիւնը իր բոլոր յուզիչ մանրամասներով»

«Անզուգայան իր կազմակերպական տաղանդով նա վարպետութեամբ կարողանում էր շահագործել իրեն հանդիպած բոլոր ուժերն ու գործօնները, կարողանում էր նրանց ուղղել դէպի իդէալ՝ հայկական ազատութեան գործը:»

«Ամբողջապէս գաղափար դարձած մի առաքել էր նա, մի զէրվիչ, ինչպէս ոմանք անւանում էին նրան, նիւթական կարօտութիւնները ու զրկանքները ոչինչ էին նրա համար և այդ միջոցներով անարդէ և թարմ քարոզիչը մէկ հոգ ունէր միայն՝ կազմակերպութեան բարգաւաճումը, որի համար կրեց երկարատեւ հալածանք ուս կառավարութեան կողմից, բանտ և աքսոր:»

Մ. Խ. Քրիստոսափոր Միքայէլեանը մի անգամ ձերբակալվել է 1891 թիւն և կարճատեւ բանտարկութիւնից յետոյ ուս կառավարութիւնը նրան առաջարկել է մի տարի կովկասից գուրու ապրել իր ցանկացած տեղում: Եւ Քրիստոսափորը ընտրել է Քիչնիւր՝ Մի անգամ էլ 95 ին ձերբակալվել և կարճատեւ բանտարկութից ազատվել է բոլորովին:

Նոյն օրը Դաշնակցութեան ղեկավար Մաճաճ վերնագրով յօդուածը որ ներքոյն է կրկին դժբախտ Քրիստոսափորին, հետեւեալ տողերն ենք կարդում:

«Հակայական ծրագիրները գլխի մէջ. յափշտակված ժողովրդական տանջանքները ստիպման իր ձեռքով՝ նա պատուէր քաղաքից քաղաք, երկրից երկիր՝ կովկասից անցաւ Եգիպտոս, Ժնէվից Բալկան, Վիեննայից նոր ազատ Բուլգարիայի մայրաքաղաքը եւ տյնտեղ բարեկամներ և համախոհներին ներգրայց մտերիմ շքերչանում իր փայլալուստ ծրագիրները հնոցի մէջ՝ դուռ ազատուոր մահը, անսպասելի ինչպէս որոտ շանթահարող, որպէս կայ ծակո:»

Նոյն յօդուածի մէջ կը կարդանք Պ. Խաչատուր Մալումեանի արտասանած գամբանական ճառի վերջաբանը որ հետեւեալն է:

«Այս դազաղի մէջ, ամփոփուած է հայ յեղափոխութեան սիրտը և հայկական մարտնչող երիտասարդութեան փայլալուստը: Իր լի վարպետ չէր մեր աննման ընկերը կամ շանթահարող ճառասաց, և ոչ էլ հայդուկները ղեկավար՝ Երեան երկրի փշոտ ձորերում. ոչ, նրա ուժն ու տաղանդը բնորոշելու համար պէտք էր հնարել մի նոր բառ, որ գոյութիւն չունի մեր լեզուի մէջ, մտքագործ էր նա, մի հմայիչ, դիւրիչ ուժ. որ հրաշակերտում էր գաղափարակտն մարդը, խոսան, անմշակ սրտերի ու ուղեղների մէջ, շարկապում նրանց և ուզում դէպի մտքի պայքար դէպի յեղափոխական վերանորոգիչ կուրիզ:»

«Իրօրակալը նոյն թիւով խոստանում է տալ նաեւ Քրիստոսափորի մանրամասն կենսագրականը յառաջիկայում, որը անշուշտ շատ հետաքրքիր պէտք է լինի:»

Պատրիարքարան Հայոց Համար Ը. 770

Կ. Պոլիս 11 Ապրիլ

Պատուարժան Երզնգի խումբ Վառնայի

Ստացանք մարտ 29 թուականաւ Ձեր ուղղած նամակն և ընդ նմին երեսուն երեք (33) Օսմ լիրայի չէք զոր զրկած էիք մեզ՝ իւր արդիւնք Ձեր նախածեռնութեամբ կազմակերպուած նուագահանդէսի մը՝ ի նպատակ ճարտար սովատանջ ազգայնոց:

Մեր սրտագին զոհունակութիւնն կը յայտնենք Ձեր այս գեղեցիկ ձեռնարկին և ինքնաբերաբար բարեգործութեան համար, զոր կատարած էք կարեկցելով Ձեր արեւակցաց տառապագին վիճակին, եւ կը մաղթենք որ Տէրն մեր Փրկիչն Յիսուս լնու զՁեզ իր անսպառ բարեօք ու պահպանէ զՁեզ ամէն աղէտներէ:

Հարկ չէ լսել թէ այս նպատակ գումարն անվերջ պիտի զրկուի Մշտ Առաջնորդարանն, ինչպէս ուրիշ կարեւոր օգնութիւններ զրկուած են Պատրիարքարանէն. եւ շարունակաբար կը զրկուին կարօտելոց ուստի և բնակարանի պէտքերուն ծառայելու համար:

Մնամք աղօթարար Պատրիարք Կ. Պոլսոյ ՄԱՂԱՔԻՍ ԱՆԻՔՊԻՍԻՈՊՈՍ

Մը կը մտնուի որ կը մտաբերէ այլեւս չի շարունակել իր այդ գործը և ձգել ու հեռանալ, սակայն երբ այդ բոլոր նեղութիւններուն կ'անսայ և յաջողութեան հաստատ հաստատով ու կորովով կը շարունակէ իր սկսած գործը կուգայ օր մը որ կը յաջողի, և այն ատեն իր կրած բոլոր նեղութիւններն և գոտարութիւնները կը մոռնայ:

Ինչոր այն անհատները որոնք յաջողած են իրենց ձեռնարկած գործերուն մէջ պատճառները ուրիշ բանի պէտք չէ վերագրել եթէ ոչ հաստատ կամքի և յարատեւութեան:

Շատ անգամներ մարդիկ կը իրենց ձեռնարկած գործերուն մէջ չեն յաջողիր՝ իսկոյն կը յուսահատին և կը ձգեն ու կը հեռանան այդ գործէն, իմ կարծիքով սակայն չը պէտք է այդպէս ընեն՝ այլ պէտք է փնտռեն այն բոլոր մեծ ու պղտիկ պատճառները որոնք արգիլելին զինքը յաջողելու, եւ յարատեւել զիտնան:

Ու երբ գտան պատճառները՝ և յարատեւեցին այն ատեն վստահ եմ թէ պիտի յաջողին՝ վասն զի ինչպէս չսի պատմութիւնը մեզից ցոյց կուտայ որ՝ յաջողութեան ամենամեծ գաղտնիքը յարատեւութեան մէջ կը կայանայ:

Այսպէս է նաեւ ազգերու ազատագրութեան գործը, այն ազգերը որոնք դիտցած են յարատեւել, անոնք յաջողած են անպատճառ: Սերպիան իր անկասկածելիք ձեռք բերելու համար պայքարած է 40 տարու չափ, Պուլկարիան 50 տարի, Յունաստանը 60 տարի, Ռուսաստան 100 տարի, իսկ փոքրիկ կրէտէն մտաւորապէս 128 տարի:

Իսկ քանի՞ տարի պայքարած է Հայ ժողովուրդը իր ազգային անկասկածելիք ձեռք բերելու համար, քանի տարի է որ ան պարգաւ է կրօնի փրկարար դրօշը և հե ի հե կը մաքառի մէկդի շարտել զարար ստրկութեան ծանր և լսիր շղթան, քանի՞ տարի է վերջապէս որ հայ ժողովուրդը զրուխ բարձրացուցած և իրեն նշանաբան ընտրած է Ազատութիւն կամ մահ նշանաբանը, 15էն 20-25 տարի:

Ինչ կարճ ժամանակամիջոց թըռուառ ազգի մը ազատագրութեան համար:

Ո՞ր ազգը՝ կամ ո՞ր ժողովուրդը ստացած է իր անկասկածելիքը այսքան կարճ ժամանակամիջոցի մը մէջ: Ծիչք է թէ հայ ազգի մէջէն ալ ծնած են փրկարար ու վեհ հոգիներ, Պետրի, Բարեկէնի, Ժիրայրի, Վազ-

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ժողովուրդ մը որ կմաքառի իր տրն տեսական ու քաղաքական անկասկածելիք ձեռք բերելու համար, այդ ժողովուրդը պէտք է անպատճառ բարեկէ և հասկնայ թէ ինչ բանի մէջ կը կայանայ իր այդ գործուն յաջողութեան ամենամեծ գաղտնիքը: Նա պէտք է ուսումնասիրէ պատմութիւնը և հետեւի պատմութեան ցոյց տուած ճամբային՝ ու քալէ անկէ:

Ինչ ճամբայ ցոյց կուտայ մեզի պատմութիւնը:

Պատմութիւնը մեզի ցոյց կուտայ որ ինչպէս անհատական նոյնպէս ազգային ու է գործու յաջողութեան գաղտնիքը անոր յարատեւութեան մէջն է:

Այսպէս անհատ մը երբ դործի մը կը ձեռնարկէ, բնական է որ ան առաջին պատեհութեամբ կը հանդիպի շատ մը դժուարութիւններու, եւ երբեմն այն աստիճան նեղ դրութեան



զէնի. Հրայրի ու անմոռանալի Վահանի նման, սակայն մինչեւ օրս ալ հայ ժողովրդին մեծագոյն մասը մնացած է տեսակ մը թմբած ու անտարբեր գրութեան մէջ:

Ինչ որ երէկ, երբ Սասունցի կարիճ լեռնականը թշնամիրն կուրծ տուած զէնք, զէնք, և զէնք կազազակէր, արտասանմանի և մասնաորակէս Ամերիկայի նման ազատ երկրի մը մէջ ապրող իր հայ եղբայրներէն, պատասխան կատանար «գնա՛ կորսուի՛ր, որովհետեւ մենք քեզի ըսինք թէ մը. Թիկ մի ընե՛ր Դաշնակցական գործիչներուն, բայց դուն առանց ականջ կախելու մեզի և մեր խօսքերուն, մէկ քանի մարդով ելար ու քու պատիւը կը պաշտպանես այսօր, կարծես մենք պատիւ չունէինք, գնա կորսուի՛ր օրովհետեւ մենք քեզի ըսինք թէ ժամանակ մը եւս համբերէ՛ թուրքին ու քուրդին եսթաղանին ասկ՛ բայց դուն չուզեցիր ու քու զրուխդ այդ աղէտը» (՝) պատրաստեցիր» եւ այլն, Եւ ամերիկահայ գաղութին մէջ չգտնուեցան ճշմարիտ հայրենասէր հայեր օրոնք զգային վտանգին մեծութիւնը և ջանային ձեռք կառկառել:

Ինչպէս ըսի մէկ մասը որովհետեւ ինք գոյութիւն չունէր տառապանքի խախտման մէջ, այլ և այլ պատրուակներով չուզեց օժանդակել, և օժանդակել ուզողներուն ալ բացարձակ արգելք (!) հանդիսացաւ որ չի օժանդակեն: Իսկ ուրիշ մէկ մասն ալ մնաց բոլորովին անտարբեր և քարացած Հ. Յ. Դաշնակցութիւնը ի զուր ջանաց հրապար. ժողովներով, և իր այս ու այն օրկանի միջոցաւ բացատրել Սասունին սպառնացող վտանգը, ի զուր ջանաց հրահրել հայրենասիրական կայծը: Որո՞ւ հոգ իրենց կային հանգիստ էր հոս և ու-

(՝) Կականակեմ նիւեօրքի ինքնապաշտպան յանձնախմբի ղեկ յարուցած էնթրիզաները, և Դաշնակցական ժողովները խառնակելու համար եղած անմիտ փորձերը, Ուստի, Լ. Վ. Է. և Ֆիլատէիֆայի մէջ:

Ա. ԱՍՏԻՆԵԱՏՈՎ
— 3 —
ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ
— 10 —
(Տօնախմբութիւն)
— 0 —
(Գրագիտի յիշողութիւններից, Ամրան արկածներ քաւական սուրօրինակ հասարակութեան մէջ)
— 0 —
(Թարգմ. ուսերէնից) 25
2.
(Շար. նախորդ թիւէն)

Իրօք հրաշալի գիշեր էր. լուսինը չափազանցօրէն պայծառ էր փայլում հողը սպիտակացնելով ձիւնի պէս և երկրի վրա գտնված բոլոր չուքերին ածուխի գոյն տալով:
Սոխակները ձայն չէր լսում, բայց հեռւից հասնում էր հարիւրաւոր գորտերի ձայնը, ամբարի մօտ, նստարանի վրա նկատեցի երկու քնուշ սուեերներ և մերձենալով, լը-

տելու հաց ալ ունէին, ալ ինչերուն պէտք թող Սասունցին անզէն ու անպաշտպան կտորուի հոն տեղ թող ամբողջ Հայաստան տրիւնի ծով դառնայ, թող անմեղ մանուկներ իրենց մայրերու արգանդներուն մէջ յօշոտուին, թող հագարաւոր քոյրեր վայրենի թուրքին ու քուրդին կիրքը յագեցնելու ծառայեցուն, իրեն ինչ իրեն ինչու պէտք է այդ բոլորը, ինք հանգիստ է այդ կը բաւէ:
Եւ այսպէս երբ Լուվոյի արձանին պէս խուլ մնացին տարիներով, ու չը լսեցին Տառապանքի Աշխարհէն եկող աղեկտուր ձայները, երբ վտանգը իր գագաթնակէտին հասաւ սկսան լալ ու ողբալ. «ամա՛ն կը ջարդեն» զջարդել կուտան» եւ այլն:

Աւելորդ կը համարեմ անգամ մը եւս կրկնել հոս այն բոլոր հակայնդափոխական և խելառ ճիգերը զոր ցոյց տուին այդ լղբալիները, ընթերցողներուն պարզած եմ արգէն այդ բոլորը ճիշդ ժամանակին:
Ե. դեռ այս ժողովուրդն է որ սկըսած է արտաջալ թէ «ինչու չենք յաջողիր»:

Ձենք յաջողիր, որովհետեւ մինչեւ այսօր ազգովին չենք կրցած փարիչ յեղափոխական փրկարար գրոշին չուրջը, չենք յաջողած որովհետեւ՝ երբ յեղափոխական կազմակերպութիւնը վտանգը մատնանիչ կրէնք մեզի, և զէնք, զէնք կապիւրսէր, մենք զէնք չի տուինք անոր, ու ծաղրեցինք ամեն անոնք՝ որոնք մեզի համար կը կռուէին քաջաբար:

Յաջողութեան ամենամեծ գաղտնիքը յարատեւութեան մէջն է:
Հայ ժողովուրդը եթէ իրականապէս կը բաղձայ իր ազգային անկախութիւնը ձեռք բերելուն, պէտք է անպատճառ յարատեւել գիտնայ, ու մաքուր իր ամբողջ ուժովը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը այսօր աւելի գիտակից և աւելի փորձառու պիտի շարունակէ սկսուած կռիւը՝ Հայ ժողովրդին կը մնայ ուրիշ քաջալերել ան՝ եւ թեւ ու թիկունք հանդիսանալ անոր:

Ինչպէս անհատական, նոյնպէս ազգային բոլոր գործերու յաջողութեան

ամենամեծ գաղտնիքը յարատեւութեան մէջն է, այսպէս կը սորվեցնէ մեզի պատմութիւնը. այսպէս կը սորվեցնէ նաեւ մարդկութիւնը:

Հետեւինք պատմութեան ցոյց տուած ճամբային և միշտ բարձր բրունենք յեղափոխական փրկարար գրոշը ու յարատեւել գիտնանք:

Ահա՛ յաջողութեան ամենամեծ գաղտնիքը:

Երուսնդ-Նարոս
Նէշուէ (Ամերիկա)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՍԱՆԻԾ

Թեհրանի Խնամակալութեան Ընկերութիւնը...

Ահա մի ընկերութիւն, որ վեց տարի գոյութիւն ունենալուց յետոյ, ոչ որոշ գոյն է ունեցել, ոչ որոշ ձեւ ու կերպ և ոչ էլ որոշ կազմակերպութիւն:

Ահա մի ընկերութիւն, որ վեց տարի շարունակ իր գոյութիւնն ու կեանքը քար է աւել միմիայն հոգաբարձութեան քմահաճոյքներէ ծովում... Ընկերով անմիջապէս հոգաբարձութեան իշխանութեան տակ և հրահանգուելով նրանց ցուցմունքներով, Խնամակալութեան ընկերութիւնը ցարդ մնացել է բոլորովին անյայտ ոչ միայն օտար քաղաքներէ, այլև իրեն՝ Թեհրանի համար, ո՛չ օրուայ խօսակցութեան նիւթ է աւելել և ոչ լրագրութեան առարկայ դարձել. նոյն իսկ թէհրանաբնակներից շատերը չը գիտեն թէ խնամակալութեան ընկերութիւն կայ քաղաքում: Ի՞նչ պատճառով, ըստ մեզ, շատ արևուր է և յոյժ ցաւալի: Խնամակալութեան ընկերութեան անգամուհիները ճնշելով հոգաբարձութիւնից, ցարդ երբեք չեն ցանկացել իրենց շրջանը ընդլայնել, սկզբից եղել են ութ, և մինչեւ այսօր էլ մնացել են ութ հոգի... Բայց զստալ քայլ է, գործունէութեան սրբալ և գլխաւորութեան եղանակէ միջնորդական և օւրախալի չէ... Խնամակալին այն է միայն, որ այդ

ընկերութիւնը ինչպէս լուծ ենք, մօտերքս ուզում է թրթափել հոգաբարձութեան ծանր և ճնշող լուծը, անկախ դիրք և ուրոյն կազմակերպութիւն է ուզում ապ իրեն: Արգէն վարչական անդամակիներէ նոր ընտրութիւն է եղել և սկսաւ աւան ծրագրի:

Ընտրուել են որպէս նախագահ, Տիկ. Մաէհհանց, որպէս գանձապահ՝ Մայի-խանուբ, և որպէս քարտուզար Գ. Ամիրխանեանը: Արդ, վարչութեան օրով մեծ յոյս է ծագում, օր. Խնամակալութեան ընկերութիւնը պիտի դուրս գայ անյայտութիւնից, պիտի ընդլայնի իր գործունէութիւնը, պիտի ընդարձակի իր շրջանը գրաւելով նորանոր անգամուհիներ և պիտի օրինակելի բարձրութեան վրայ կանգնեցնի իւր նորաբաց արհեստանոցը, ուր այժմ մօտ 15 աշակերտակիներ կար ու ձեւ են սովորում... Այդ պարսականութիւնները մեծ մասամբ ճանապարհ են Յ հոգու վրայ, ի նարկէ աւելի քարտուղարի, որը որպէս քաղաքացի և աշխարհ ման եկեղծ օրիորդ՝ կարծում ենք որ կը մղուի իւր պարտատականութիւններ վեհութիւնը ու չի զլանար նրանց անթերի կատարման մէջ:

Գոմեղի և միեւնոյն ժամանակ խրատուածքի արժանի կը լինէր, եթէ ինչեւ վարչութիւնը նշանակէր անգամավարներ, որոնք մշտապէս և տարեկան անգամուհիներ, գրաւելու և առջ քայլեր ընկերութեանը դրամական առատ նպաստ առող պատուաւոր անգամուհիներ և որ զլխաւորն է՝ զարթեցնելը նոցա մէջ գործունէութեան թափ, կրանդ, կը բալ, համարախոթութեան ոգի, օգրնականութեան վեհ գիտակցութիւն և այլ... Երբեք չպիտի նրանն ողորմութիւն տալու աչքով նայն այս ինչ կամ այնինչ հաստատութեան և ոչ էլ պիտի ջանան ձեռք ձեռք տուած գործել հոգաբարձութեան հետ որքան հոգաբարձութեան հետ ու պահեն իրենց, այնքան աւելի օգտակար կարող են դառնալ տեղոյն հասարակութեան համար, որովհետեւ հոգաբարձութիւնից խէր չկայ:

վստահութիւն ունէի այդ երիտասարդի վրա և գիտէի թէ հոգով ու սրտով ներված է Վիկտորիա Պավլովային և ուրախ կը լինի ինձ օգնելու. Բուրուսի օյիները խօր տակելու համար:

Ես նրան բաժանեցի իր շփոթված ու շտապով անբերեւութանաւ տրա մաղրված Դուրիցիէից և այդ կէս վրչերին ուրականի պէս թափառելու պատճառները բացատրեցի... Ու սանողը բարձրաձայն ծիծաղեց:

— Այ, ապուշներ, այ երկնային խնթեր, սուտ էր նա. բայց Վիկտորիա Պավլովայի մօտ այժմ գրտնըվում է Արինան, Մենք Ազնէսայի հետ մեր աչքերովը տեսանք, թէ ինչպէս նա մի քիչ առաջ այստեղից անցաւ, Ես զարմացայ էլ որ այդպէս ուշ նա այնտեղ է գնում, Բայց Ազնէսան սուտ է որ Արինան վաղը Ռայինսկայի տօնավաճառը կը գնայ, կարելի է մոտացել էր օրիորդին հարցնել թէ ինչ պէտք է գնել:

Կարծես կրճերս վրայից ծանր քար ընկաւ. ողբերգութիւնը կատակերգութեան էր վերածվում:

— Ափսոս Վանկան այստեղ չէ, բարձրաձայն ծիծաղելով շարունակեց

ուսանողը. երկոյնեան գնաց ձուկ որսալու: Այ նա մեզ լաւ կը պատկերացնէր այդ տխուր ասպիտին... Ահա և Արինան վերադառնում է...

Տնտեսուհու կերպարանքը ճերմկած ու աւելի խոշորցած լուսնի լոյսի ազդեցութիւնից, գնդակի պէս դուրս գլորվեց գունից և արագութեամբ մեր մօտով անցաւ:

— Արինա Տնտեսուհու, ձայնեց ուսանողը, հետապնդողներին տեսա՞ք, ամէն բան կարգին է:

— Ծիծաղեց մեռնելու է. պատասխանեց Արինան քայլելով և հաճոյքով ծիծաղելով:

Մենք այդ գիշեր մինչ լուսածագ քնել չը կարողացանք, Առաջ իմ ընդ նակարանի գրան պղնձը նստած յեքտոյ իմ սենեակում, ուր եկան յիւմար արկածի երկու հերոսները, ամբողջովին ամօթահար, իսկ Աֆանա, սիլը հագիւ օտարի վրա կանգնելու ընդունակ շատ հիւրասիրված լինելու պատճառով:

Աֆանասիքը ուրախ ուրախ ծիծաղում և ձեռքերը շփում էր:

Բուրուսը ընդհակառակը սփարթնած, մոռալ կարծես նախանձի կասկածնտութեան անյաջողութեան պատ

Մզեալ երկտող նամակաւ մը մա-
մադրութիւն խնդրեցի իրմէ. Պ.
Գալֆանի իմ նամակէս այսպէս
պատասխանեց.

«Յարգելի պարոն՝, երբոր մի
մարդու ֆիզիքական ուժերը թու-
լացել և նեարգային ներգաշնակ
գործողութիւնը խանգարել է,
այդ դէպքում, նրա մտաւոր ու-
ժերն ու հոգեկան տրամադրու-
թիւններն էլ իրանց թարմու-
թիւնը, փայլը, շողորը, և գոյնը
հակասական վիճակի մէջ կը ծրփ-
ծրփան. Հետեւաբար ինչ նման
մի տառապող արարածը բացի
տիրութիւնից չէ կարող ուրիշ
զգացմունքներ շնչել ձեր նման
ազնիւ պարոններին. Եթէ ձանձ-
բացել էք ուրախ տրամադրու-
թիւններէ, վաղը ժամը 11 ին
իմ սենեակումս ձեզի կը սպասեմ.
Լինել մեր մէջ արտիստ բանաս-
տեղծ են... դա կը նշանակէ,
տիրիւր յուզուիլ, ալեկոծուիլ,
բորբոքիլ, բողբոլիլ, արհամար-
հանքիլ, արգահատանքիլ, ծաղի-
րանքիլ, բաժրասանքիլ նիւթ չի-
նել.

Վառող մօժը, թէպէտև ուրիշ-
ները լոյս է տալիս, բայց ինքը
սակաւ առ սակաւ հարում է.»

Մնամ Զեբր
Կ. ԳԱԼՖԱՆԻ

Միւս օր ժամը 11 ին Պ. Գալ-
ֆանի սենեակին մէջ գտայ.
նա սաստիկ գունատ և նիհարած
էր, անոր մեղամաղձիկ աչքերու
և խոհուն ճակտի արտայայտու-
թիւնը զգայուն օրտերուն շատ
բաներ մտածել և զգալ կուտան...
Պ. Գալֆանի 4 արարուածնե-
րով արամ մը գրած է, « Երգեա-
ները և սրբազան սէրը ».

«Եթէ մի քիչ ֆիզիքայէս ա-
ռողջանամ, այո ամառ Պուլկա-
րիայում պիտի ներկայացնեմ ը-
սաւ .

Տրամի նիւթը շատ հետաքրք-
րաշարժ է. Պ. Գալֆանի իր
հեղինակած տրամի մէջ հայ ըն-
տանիքներու նախապաշարուածնե-
րը իրենց միջին ծաղբերով ար-
տացուած է. երիտասարդներու
բարոյական և մտաւոր պարգացու-
մի անհրաժեշտութիւնը կը շեշտե
հայ ծնողներու բանութիւնները
(իրենց զաւակներու հանդէպ ա-
մուսնական հարցերու մէջ) կը
զատապարտէ եւայլն.

Պ. Գալֆանի իր տրամը գի-
տական և բարոյական մտածում-
ներու վրայ հիւսած է.

Երանի՛ թէ Պուլկարիոյ կլի-
ման մեր տաղանդաւոր Շէքսպիր-
եան ողբերգու-գրողէտի ֆիզի-
քական ոյժերը վերանորոգէր.

Հրանտ Եաղուպեան
Գահիրէ 16 ապրիլ

—)o(—

ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

Դերասանուհի Տիկին Պայծառ
Փասուլեանի շատ զեղեցիկ
մէկ անգնագործութիւնը. Տր-
դատ թագաւորի մկրտութիւնը Ս.
Գրիգոր Լուսաւորչէն, վիճակ-
հանութեան գրուած բլլալով, կը
ծանուցուի թէ վիճակահանու-
թիւնը տեղի պիտի ունենայ մա-
յիս 1 ին, կիրակի ժամը 2 ին ազ-
գային վարժարանին մէջ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարական շատ մը քաղաք-
ներու մէջ, ինչպէս և Վասնա
գործարարները ասոնցին մայիսի
1ը. թափոններով փողոցներէն
անցնելով և ճառագայտութիւններ
ընելով. Լայն և շեղ ընկերջա-
րակները զատկապա կը տան-
ին գործարարական այդ տօնը.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բարձրագոյն Դուռ անհան-
գիտ է Ալպանական գահի թիկ-
նածու կըլան Գիկային ըրած
յայտարարութիւններուն պատ-
ճառով.

— Սուլթան Համիտի կըրպուր
Բէնալէտարն Ապրիլ 15 ին մեծեր
է.

— Ալպանական Սանա քաղաքը
անձնատուր եղեր է սպասամբ-
ներուն. Բ. Դուռը անկարող է
զօրք զրկել Արարիա. Սանյի մէջ
քանի մը անկլիսպատակ Հնդ-
կացիներ սպանուած են.

Մակիդոնիա

Սելանիքի մէջ նոր խուլար-
կութիւններ տեղի ունեցեր են.

— Մակեդոնական ձերքին կապ-
մակերպութեան Բարձր. Կոմիտէն
եւրոպական հիւպատոսներուն բո-
ղոքազիր մը տուած է յոյներու
կատարած գազանութիւններու
առթիւ և յայտարարած է օր այ-
սրկնտե խտրել պիտի պատճէ
մակեդոնիոյ ազատագրութեան
գործին խանգարողներուն, որոնց
մէջ կը գտնուին նաեւ յոյն և
պիսիոպոսներ, որոնք կը քա-
ջալերեն յունական գազանու-
թիւնները հանդէպ պուլկարնե-
րուն.

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Դաւանողութիւններու ազատու-
թեան համար Ռուսիոյ մէջ կայ
սերական հրովարտակ մը հրա-
տարակուցաւ. Այսուհետեւ պիտի
զագրին դաւանափոխութեան
համար եղած հալածանքները.
— Ուրիշ հրովարտակով գիւղա-

ջինեցուն յետաձգ առաքելութեան
զիջողութիւն կըլլայ, որպէսզի
գիւղացիները կարենան սերմա-
ցու գնել.

— Բեթերսպուրկի մէջ յուր
տարածուած է որ տերօրիստները
կրկին կը պատրաստուին բարձ-
րաստիճան մարդիկ սպաննելու.
Անցեալ օրեր մասնաւոր տան մը
մէջ ումը պայթեթ է լեցուցուած
ատենը և երկու հոգի վիրաւոր
ուեր են.

— Բուխարայի գործարանին
բանտներէն 14 հազար հոգի
յայտարարութիւն մը ստորագրած
են. որով կը յայտարարեն
թէ գործարանին մէջ բլլալիք ո
և է ապստամբական ջոյցի մը ար-
գելք պիտի ըլլան.

— Մայիս 1 ին քանի մը քաղաք-
ներու մէջ, մանաւանդ Ռուսական
լեհաստանի գործարարական ջոյ-
ցեր տեղի ունեցեր են, կան վի-
րաւորեալներ և սպաննուածներ.

Կ Ր Է Տ Է

Թերէսի յեղափոխական կոմի-
տէն բողոքեր է երկնփոխական
մարտին այն սոսշման դէմ, որով
կրկին վարչութեան ղեկը առ-
ժամապէս կը յանձնուի իշխան
Եօրկիտի.

— Ապրիլ 1 ին եղած ջոյցե-
րուն պատճառով ձերքակուած
ները ազատ արձակուած են.

— Ո թէնքէն եւրոպական թեր-
թերուն կը հաղորդեն որ սար-
տամբները որոշած են զի նախփ-
չըլլալ մինչև որ կրէսէի յու-
նաստանի հետ միացուի պայտօ-
նապէս չը հաստատուի. Ապստամ-
բութեան ղեկավարները յայտա-
բարած են որ միութեան հաստա-
տուած տեղի ունեցան. վերջը
անսխալապէս սոստամեայ կառա-
վարութիւնը պիտի հրաժարի.

— Միջազգային զօրքերի 1 է-
տիմի մէջ յունական յրթոյններ
բարձրացնելուն արգելք հանդի-
սացած միջոցին, սոսս զօրքերու
հրամանատարը խնդրած է յու-
նական զօրջակէկը բարձրացնել,
յայտարարելով որ ինք իրուսնը
չուրի հակառակելու միտքեանը,
որ տեղի ունեցած է կրէտական
երեսփոխական ժողովին դո-
չո մոլը.

Ռ Ո Ւ Ս — Ճ Ա Ր Ո Ւ Ա Ս Ա Ն

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Մարեթայ Ուսմա այժմ Մտն.
չուրիոյ մէջ իր տաճարութեան
տակ ունի 600000 գիծուոր և եր-
կու հազար թիգանթ, իսկ ուս-
նեջը Վալտիվալթի մէջ զըս-
նուած գիծուորներու հետ չորս
հարիւր հազար և 600 թիգանթ.

— Բօտանայէնոյի մեկներ է
դէպի Ֆիլիպեան կղզիները, հոն
պիտի սպասէ երրորդ նաւատորմի-

զին գալուն, օրու հետ միացած
պիտի անցնի դէպի Վալտիվալթ
թոք.

— Բեթերսպուրկէն եկած հե-
տադէ մը կիմացուի որ կառա-
վարութիւնը մեծ արագութեամբ
չորրորդ նաւատորմի մը կազմա-
կերպեր է Մայիս 1 ին կը զրկե-
լու համար.

Շուտայի Պետո Պուլկարայի ըն-
թերցարանին մէջ կը ծախուի Հայ
Յեղ. Դաշնակցութեան բարձրագոյն-
դակ սեկցած զինանշանը գաճէ խիտ
քեղզ պատրաստուած 49—43 սն. մե-
ծութեամբ. Այժմ ստորագրեց Պ. Երանտ
Փարիզի մէջ, որ զեղաք լուստրան
գնահատելի գործ մըն է.

Կարճէ որ ամեն հայաշէտակե-
ցակցին ընկեր ունեցաւ, որ սին-
եակին մէջ.

Գինն է 10 ֆրանք կանխիկ
գինիլ Շուտայի Պետո Պուլկարայի
ընթերցարանի վարչութեան.

ՓՈՒՌԱՏԷՔ ՕԳՏՈՒՆԻԼ ՈՒ ՕԳՆԵԼ

Հաւսարանի զիտական ու գրական
հանդէսի երկու հատորները (որոնցով
միայն 50 օրինակներ մնացած են),
փոխանակ իրենց իրական արժէքովը
22 ֆրանքիս ծախուելու, «կը ծախ-
ուին 15 ֆրանքիս միայն.

Աւելորդ է խօսիլ անոր բովանդա-
կութեան շահեկանութեան մասին,
որուն վրայ արդէն հայ մամուլի լա-
ւագոյն ներկայացուցիչները ժամա-
նակին չաւայած են գնահատանքի ա-
մենէն փայտայնչները.

Բացի այն որ Համալսարանի երկու
կտորները իրենց անթառամ ու հրա-
հանքիչ պարունակութեամբը պիտի
ըլլան մըշտ ինքնազարգացումով զբա-
ղողներու համայնագիտարանը, այլև
լաւագոյն անկիւնը պիտի գրաւեն
միշտ փնտռուած և հետաքրքիր գիր-
քերու մէջ, որոնք պիտի զարդարեն
անհատական թէ հասարակական գրա-
դարանները, մնալով ցարդ ամենէն
փայլուն նմուշը աշայ լրագրութեան.

Համալսարանի գինը տկարացնելով
մեր նպատակն է առաջին շուտով տա-
րածել անոր մնացած հատորները հայ
ժողովրդին մէջ, որպէսզի իրենց հրա-
հանդէպ նպատակին ծառայեն, երկ-
րորդ գեղեցիկ առիթ մը ընծայել,
չայն գնել փութացող ուսումնասէր-
ներուն առաջ ու է զոնորութեան,
կարենալ օգնելու Մուշի կարոտալ-
ներուն, որովհետեւ զրա հասոյթին
մէջ երրորդ մասը պիտի յատկացուի
այդ վերջիններուն. Գնողներու ա-
նունները կամ ծածկանունները, ինչ-
պէս որ իրենք փափաքին, հրատա-
րակուելու են «Հայրենիքի» նոյն ը-
լատակով բացած հանգանակութեան
ցանկին մէջ.

Եմեն տեղի համար երկու հատոր-
ները թղթակազմ 45 ֆրանք կարելի
էլ զիմել Շարժումի խմբագրութեան
կամ ուղղակի.

Պաշտասարան 19 ըրի Վօլիլին
Բարիկ

Отговорникъ
Мурадъ Ераносянъ

Печатница «Взаимность» Врда